

**«Կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման մասին»
Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010/30/ԵՄ հրահանգը լրացնող՝**

**Հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 28-ի
թիվ 1061/2010 պատվիրակված կանոնակարգ (ԵՄ)**

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով «Էներգասպառող արտադրանքի կողմից սպառվող էներգիայի եւ այլ ռեսուրսների վերաբերյալ՝ պիտակավորման եւ արտադրանքի մասին ստանդարտ տեղեկությունների ներկայացման միջոցով նշում կատարելու մասին»

Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2010 թվականի մայիսի 19-ի 2010/30/ԵՄ հրահանգը ¹ եւ մասնավորապես՝ դրա 10-րդ հոդվածը,

քանի որ՝

- 1) 2010/30/ԵՄ հրահանգով պահանջվում է, որ Հանձնաժողովն ընդունի պատվիրակված ակտեր՝ կապված էներգասպառող այնպիսի արտադրանքի պիտակավորման հետ, որն ունի էներգիայի խնայողության զգալի ներուժ եւ համարժեք ֆունկցիոնալության պարագայում՝ արդյունավետության մակարդակներում էական տարբերություններ.
- 2) կենցաղային լվացքի մեքենաների էներգապիտակավորման վերաբերյալ դրույթները սահմանվել են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1995 թվականի մայիսի 23-ի 95/12/ԵՀ հրահանգով՝ կապված կենցաղային էլեկտրական լվացքի մեքենաների էներգապիտակավորման հետ ².

¹ ՊՏ L 153, 18.06.2010թ., էջ 1:

² ՊՏ L 47, 24.02.1996թ., էջ 35:

- 3) կենցաղային լվացքի մեքենաների կողմից սպառվող էներգիան կազմում է Միությունում կենցաղային նպատակներով էներգիայի ընդհանուր պահանջարկի զգալի մասը: Բացի էներգաարդյունավետության առումով արդեն իսկ կատարված բարելավումներից՝ կենցաղային լվացքի մեքենաների կողմից էներգիայի սպառումը հետագայում նվազեցնելու շրջանակն էական նշանակություն ունի.
- 4) 95/12/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի եւ սույն կանոնակարգով նոր դրույթներ սահմանվեն՝ ապահովելու համար էներգապիտակավորման միջոցով մատակարարների համար դինամիկ խրախուսական միջոցների ստեղծումը՝ կենցաղային լվացքի մեքենաների էներգաարդյունավետությունն էլ ավելի բարելավելու եւ դեպի էներգաարդյունավետ տեխնոլոգիաների շուկա անցումն արագացնելու համար.
- 5) համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենաները կարգավորվում են Խորհրդի 92/75/ԵՏՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 1996 թվականի սեպտեմբերի 19-ի 96/60/ԵՀ հրահանգով՝ կապված համակցված լվացող եւ չորացնող կենցաղային լվացքի մեքենաների¹ էներգապիտակավորման հետ, եւ հետեւաբար պետք է բացառվեն սույն կանոնակարգի կարգավորման ոլորտից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով, որ դրանք առաջարկում են կենցաղային լվացքի մեքենաներին համարժեք ֆունկցիոնալ հնարավորություններ, 96/60/ԵՀ հրահանգի վերանայումը պետք է իրականացվի հնարավորինս շուտ.
- 6) պիտակի վրա ներկայացվող տեղեկությունները պետք է ձեռք բերվեն հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման ընթացակարգերի կիրառմամբ, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, ներառյալ՝ առկայության դեպքում՝ ստանդարտացման եվրոպական մարմինների կողմից ընդունված ներդաշնակեցված ստանդարտները, ինչպես դրանք թվարկված են

¹ՊՏ L 266, 18.10.1996թ., էջ 1:

Տեխնիկական ստանդարտների եւ կանոնակարգերի, ինչպես նաեւ տեղեկատվական հասարակության ծառայությունների մասին կանոնների ոլորտներում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի 98/34/ԵՀ հրահանգի I հավելվածում¹։

- 7) սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային վաճառքի մեքենաների պիտակների միասնական ձեւն ու բովանդակությունը։
- 8) բացի այդ, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային վաճառքի մեքենաների տեխնիկական փաստաթղթերին եւ տեղեկաթերթիկներին ներկայացվող պահանջները։
- 9) ավելին, սույն կանոնակարգով պետք է սահմանվեն կենցաղային վաճառքի մեքենաների հեռահար վաճառքի, գովազդի, ինչպես նաեւ տեխնիկական գովազդային նյութերի ցանկացած տեսակի համար տրամադրվող տեղեկություններին ներկայացվող պահանջները։
- 10) անհրաժեշտ է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայումը՝ տեխնոլոգիական առաջընթացը հաշվի առնելով։
- 11) 95/12/ԵՀ հրահանգից դեպի սույն կանոնակարգ անցումը դյուրացնելու նպատակով միջոցներ պետք է ձեռնարկվեն, որպեսզի սույն կանոնակարգի համաձայն պիտակավորված կենցաղային վաճառքի մեքենաները համարվեն 95/12/ԵՀ հրահանգին համապատասխանող։
- 12) հետեւաբար 95/12/ԵՀ հրահանգը պետք է ուժը կորցրած ճանաչվի,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

¹ՊՏ L 204, 21.07.1998թ., էջ 37:

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էլեկտրական ցանցից սնուցվող կենցաղային վացքի մեքենաների, էլեկտրական ցանցից սնուցվող եւ մարտկոցներով աշխատելու հնարավորություն ունեցող վացքի մեքենաների, այդ թվում՝ ոչ կենցաղային նպատակներով օգտագործման համար վաճառվող եւ ներկառուցված կենցաղային վացքի մեքենաների պիտակավորմանը եւ արտադրանքի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների տրամադրմանը ներկայացվող պահանջները:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում համակցված վացող եւ չորացնող կենցաղային մեքենաների նկատմամբ:

Հոդված 2

Սահմանումները

Ի հավելումն 2010/30/ԵՄ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «կենցաղային վացքի մեքենա» նշանակում է ավտոմատ վացքի մեքենա, որը, ջուր օգտագործելով վանում, ողողում է գործվածքը, ունի նաեւ ցենտրիֆուգային եղանակով քամելու հնարավորություն եւ նախատեսված է հիմնականում ոչ պրոֆեսիոնալ նպատակներով օգտագործման համար.
- 2) «ներկառուցված կենցաղային վացքի մեքենա» նշանակում է կենցաղային վացքի մեքենա, որը նախատեսված է պահարանում, պատի մեջ կամ նմանատիպ վայրում բացված այնպիսի խորշում տեղադրման համար, որը պետք է վերջնամշակվի կահույքի միջոցով.

- 3) «ավտոմատ լվացքի մեքենա» նշանակում է լվացքի մեքենա, որտեղ բեռնվածքի հետ կատարվող բոլոր գործողությունները կատարվում են մեքենայի կողմից՝ ծրագրի ընթացքում ցանկացած պահի՝ առանց օգտագործողի միջամտության անհրաժեշտության.
- 4) «համակցված լվացող եւ չորացնող կենցաղային մեքենա» նշանակում է կենցաղային լվացքի մեքենա, որն ունի թե՛ ցենտրիֆուգային եղանակով քամելու, թե՛ գործվածքները չորացնելու հնարավորություն՝ սովորաբար տաքացնելու կամ թմբկահարելու միջոցով.
- 5) «ծրագիր» նշանակում է նախապես սահմանված այնպիսի գործողությունների շարք, որոնք մատակարարի կողմից ընդունելի են համարվում գործվածքի կոնկրետ տեսակներ չորացնելու համար.
- 6) «ցիկլ» նշանակում է լվացման, ողողման եւ քամելու այն ամբողջական ընթացքը, որը սահմանվել է ընտրված ծրագրի համար.
- 7) «ծրագրի ժամանակ» նշանակում է ծրագրի սկզբից մինչեւ ծրագրի ավարտն ընկած ժամանակահատված՝ բացառությամբ վերջնական սպառողի կողմից ծրագրված ցանկացած հետաձգման.
- 8) «նոմինալ տարողունակություն» նշանակում է մատակարարի կողմից նշված առավելագույն զանգվածը՝ կիլոգրամով, որը մատակարարի կողմից նշվում է 0.5 կիլոգրամով աճման կարգով՝ կոնկրետ տեսակի չոր գործվածքի համար, որը ընտրված ծրագրով կարող է լվացվել կենցաղային լվացքի մեքենայով, եթե այն բեռնվում է մատակարարի հրահանգների համաձայն.
- 9) «մասնակի բեռնվածք» նշանակում է տվյալ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի նոմինալ տարողունակության կեսը.
- 10) «մնացորդային խոնավության պարունակություն» նշանակում է քամելու փուլի ավարտին բեռնվածքում առկա խոնավության քանակությունը.

- 11) «անջատված ռեժիմ» նշանակում է մի վիճակ, որին կենցաղային լվացքի մեքենան անցնում է սարքի կառավարման այնպիսի միջոցներով կամ գործարկիչներով, որոնք նվազագույն էներգասպառում ապահովելու նպատակով հասանելի են եւ նախատեսված են սովորական օգտագործման ժամանակ վերջնական սպառողի կողմից գործարկվելու համար, ինչը կարող է շարունակվել անորոշ ժամանակ, երբ կենցաղային լվացքի մեքենան միացված է հոսանքի աղբյուրին եւ օգտագործվում է մատակարարի հրահանգների համաձայն. եթե վերջնական սպառողի համար հասանելի չեն կառավարման միջոցներ կամ գործարկիչներ, ապա «անջատված ռեժիմ» նշանակում է այնպիսի վիճակ, որը տեղի է ունենում այն բանից հետո, երբ կենցաղային լվացքի մեքենան ինքնուրույն անցնում է էներգիայի սպառման հաստատուն ռեժիմին.
- 12) «միացված ռեժիմ» նշանակում է նվազագույն էներգասպառման ռեժիմ, որը ծրագիրն ավարտվելուց հետո կարող է շարունակվել անորոշ ժամանակ, եւ որի համար վերջնական սպառողից չի պահանջվում որեւէ լրացուցիչ միջամտություն՝ բացի կենցաղային լվացքի մեքենան դատարկելուց.
- 13) «կենցաղային լվացքի մեքենայի համարժեք» նշանակում է միեւնույն մատակարարի կողմից այլ առետրային կողով շուկայահանված կենցաղային լվացքի մեքենայի մեկ այլ մոդել, որը շուկայահանվել է նույն նոմինալ տարողունակությամբ, տեխնիկական եւ շահագործման բնութագրերով, էներգիայի եւ ջրի սպառմամբ, ինչպես նաեւ լվացման եւ քամելու ընթացքում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակով.
- 14) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի կենցաղային լվացքի մեքենան.
- 15) «վաճառքի կետ» նշանակում է վայր, որտեղ կենցաղային լվացքի մեքենաները ցուցադրվում կամ առաջարկվում են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար:

Հոդված 3

Մատակարարների պարտականությունները

Մատակարարներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային լվացքի մեքենա համալրված լինի I հավելվածով սահմանված ձեռաչափով եւ տեղեկությունների պարունակությամբ տպագրված պիտակով.
- բ) տրամադրվի II հավելվածով սահմանված արտադրանքի տեղեկաթերթիկը.
- գ) անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին ներկայացված պահանջի դեպքում տրամադրվեն III հավելվածով սահմանված տեխնիկական փաստաթղթերը.
- դ) կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդում հրապարակվում են էներգասպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
- ե) կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ ցանկացած տեխնիկական գովազդային նյութ, որով նկարագրվում են դրա որոշ տեխնիկական պարամետրեր, ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի մասին տեղեկություններ:

Հոդված 4

Վաճառողների պարտականությունները

Վաճառողներն ապահովում են, որ՝

- ա) յուրաքանչյուր կենցաղային լվացքի մեքենա վաճառքի կետում, 3 (ա) հոդվածին համապատասխան, դիմային մասի վրա կամ սարքի վերին մասում դրսի կողմից կրի մատակարարների կողմից տրամադրված պիտակն այնպես, որ այն լինի հստակ տեսանելի.

- բ) վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար առաջարկվող կենցաղային լվացքի մեքենաներն այն դեպքերում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողը կտեսնի ցուցադրված արտադրանքը, շուկայահանվեն IV հավելվածին համապատասխան՝ մատակարարների կողմից տրամադրվող տեղեկությունների զետեղմամբ.
- գ) կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելի ցանկացած գովազդում նշվի էներգաարդյունավետության դասը, եթե գովազդը պարունակում է էներգասպառման կամ գնի վերաբերյալ տեղեկություններ.
- դ) կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելին վերաբերող եւ դրա որոշ տեխնիկական պարամետրեր նկարագրող ցանկացած տեխնիկական գովազդային նյութ ընդգրկի այդ մոդելի էներգաարդյունավետության դասի վերաբերյալ հղում:

Հոդված 5

Չափման մեթոդները

3-րդ եւ 4-րդ հոդվածների համաձայն տրամադրվելիք տեղեկությունները ձեռք են բերվում հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգերով, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները:

Հոդված 6

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Էներգաարդյունավետության հայտարարված դասին, տարեկան էներգասպառմանը, ջրի տարեկան սպառմանը, քամելու եղանակով չորացման արդյունավետության դասին, անջատված եւ միացված ռեժիմներում

էներգասպառմանը, միացված ռեժիմի տեւողությանը, մնացորդային խոնավության պարունակությանը, պտտման արագությանը եւ օդով փոխանվցող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակներին համապատասխանությունը գնահատելիս անդամ պետությունները կիրառում են V հավելվածով սահմանված ընթացակարգը:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը սույն կանոնակարգը վերանայում է տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից՝ այն ուժի մեջ մտնելուց հետո ոչ ուշ, քան չորս տարի անց: Վերանայման արդյունքում գնահատվում են մասնավորապես V հավելվածով սահմանված՝ ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները:

Հոդված 8

Ուժը կորցրած ճանաչելը

95/12/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2011 թվականի դեկտեմբերի 20-ից:

Հոդված 9

Անցումային դրույթներ

1. 3(դ), 3(ե) հոդվածները, 4(բ), 4(գ), 4(դ) հոդվածները չեն կիրառվում մինչեւ 2012 թվականի ապրիլի 20-ը հրապարակված տպագիր գովազդների եւ տպագիր տեխնիկական գովազդային նյութերի նկատմամբ:
2. Մինչեւ 2011 թվականի դեկտեմբերի 20-ը շուկայահանված կենցաղային լվացքի մեքենաները պետք է համապատասխանեն 95/12/ԵՀ հրահանգով սահմանված դրույթներին:

3. «Կենցաղային լվացքի մեքենաների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009/125/ԵՀ հրահանգի՝ համար որեւէ կիրարկման միջոց ընդունվելու դեպքում այն կենցաղային լվացքի մեքենաները, որոնք համապատասխանում են լվացման արդյունավետությանը ներկայացվող պահանջների մասով այդ կիրարկման միջոցի դրույթների և սույն կանոնակարգի դրույթների պահանջներին, ինչպես նաև շուկայահանվել կամ առաջարկվել են վաճառքի, վարձակալության կամ ապառիկ գնման համար մինչև 2011 թվականի դեկտեմբերի 20-ը, կհամարվեն 95/12/ԵՀ հրահանգի պահանջներին համապատասխանող:

Հոդված 10

Ուժի մեջ մտնելը և կիրառությունը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում* հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:
2. Այն կիրառվում է 2011 թվականի դեկտեմբերի 20-ից: Այնուամենայնիվ, 3(դ) և 3 (ե) հոդվածները, 4(բ), 4(գ), 4(դ) հոդվածները կիրառվում են 2012 թվականի ապրիլի 20-ից:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2010 թվականի սեպտեմբերի 28-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ


Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ., էջ 10:

ՀԱՎԵԼՎԱԾ I

Պիտակ

1. ՊԻՏԱԿ



1) Պիտակը պետք է ներառի հետևյալ տեղեկությունները՝

- I. մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
- II. մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով կենցաղային վացքի մեքենայի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
- III. էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետում. կենցաղային վացքի մեքենայի էներգաարդյունավետության դասը պարունակող սլաքի ծայրը պետք է զետեղված լինի նույն բարձրության վրա, ինչ համապատասխան էներգաարդյունավետության դասի սլաքի ծայրը.
- IV. հաշվարկված տարեկան էներգասպառումը (AE_c) կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը՝ VII հավելվածի համաձայն.
- V. ջրի հաշվարկված տարեկան սպառումը (AW_c) լ/տարի-ով՝ կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը՝ VII հավելվածի համաձայն.
- VI. լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ լրիվ բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար նոմինալ տարողունակությունը՝ կիրգրամով՝ կախված նրանից, թե որն է ավելի ցածր.
- VII. քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 2-րդ կետով.
- VIII. լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ծրագրի համար վացման եւ քամելու փուլերում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝


1 պվտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

- 2) Պիտակի ձեւը պետք է համապատասխանի 2-րդ կետով սահմանվածին: Որպես բացառություն, եթե մոդելին Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի՝ թիվ 66/2010 (ԵՀ) կանոնակարգի համաձայն շնորհվել է «ԵՄ էկոպիտակ», ապա կարող է ավելացվել ԵՄ էկոպիտակի պատճենը:

¹ ՊՏ L 27, 30.01.2010թ., էջ 1:

2. ՊԻՏԱԿԻ ՁԵՎԸ

Պիտակի ձևը պետք է համապատասխանի ստորև բերված պատկերին,



որտեղ՝

ա) պիտակը պետք է ունենա առնվազն 110 մմ լայնություն եւ 220 մմ բարձրություն: Եթե պիտակը տպագրված է ավելի մեծ ձեւաչափով, ապա դրա բովանդակությունը պետք է, այնուամենայնիվ, համապատասխանի վերը նշված մասնագրերին.

բ) ֆոնը պետք է լինի սպիտակ.

գ) գույները՝ ԿԿԴՄ՝ կապտականաչ, կարմրամանուշակագույն, դեղին, սեւ, ինչպես հետեւյալ օրինակում՝ 00-70-X-00՝ 0 % կապտականաչ, 70 % կարմրամանուշակագույն, 100 % դեղին, 0 % սեւ.

դ) պիտակը պետք է բավարարի հետեւյալ բոլոր պահանջները (թվերը վերաբերում են վերոնշյալ պատկերին):

1. Սահմանագծեր՝ 5 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

2. ԵՄ լոգոն (պատկերանիշը)՝ գույներ՝ X-80-00-00 եւ 00-00-X-00:

3. Էներգիայի լոգոն՝ գույն՝ X-00-00-00:

Գրաֆիկական պատկերը՝ ինչպես ցուցադրված է. ԵՄ լոգո եւ Էներգիայի լոգո (համակցված), լայնություն՝ 92 մմ, բարձրություն՝ 17 մմ:

4. Լոգոյի տակ գտնվող եզրագիծը՝ 1 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, երկարություն՝ 92.5 մմ:

5. A-ից G սանդղակը՝

— **Սլաք՝** բարձրություն՝ 7 մմ, տարածություն՝ 0.75 մմ, գույներ՝

— Ամենաբարձր դասը՝ X-00-X-00,

— Երկրորդ դասը՝ 70-00-X-00,

— Երրորդ դասը՝ 30-00-X-00,

- Չորրորդ դասը՝ 00-00-X-00,
 - Հինգերորդ դասը՝ 00-30-X-00,
 - Վեցերորդ դասը՝ 00-70-X-00,
 - Վերջին դասը՝ 00-X-X-00:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշանները, «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

6. Էներգաարդյունավետության դասը

- **Սլաք՝** լայնություն՝ 26 մմ, բարձրություն՝ 14 մմ, 100 % սեւ:
- **Տեքստ՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 29 կետ, մեծատառ եւ սպիտակ, «+» պայմանանշանները, «Կալիբրի» տառատեսակ, թավ 18 կետ, մեծատառ, սպիտակ, գտնվում են մեկ շարքի վրա:

7. Էներգիա՝

Տեքստը՝ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 11 կետ, մեծատառ, 100 % սեւ:

8. Հաշվարկված տարեկան էներգասպառումը

- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 42 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 17 կետ, 100 % սեւ:

9. Ջրի հաշվարկված տարեկան սպառումը

- **Գրաֆիկական պատկեր՝ ինչպես ցուցադրված է**
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:

- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

10. Նոմինալ տարողունակությունը

- **Գրաֆիկական պատկեր՝** ինչպես ցուցադրված է
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

11. Քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը

- **Գրաֆիկական պատկեր՝** ինչպես ցուցադրված է
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, հորիզոնական սանդղակ՝ 75 %, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, թավ 22 կետ, հորիզոնական սանդղակ՝ 75 %, 100 % սեւ:

12. Օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները

- **Գրաֆիկական պատկեր՝** ինչպես ցուցադրված է
- **Եզրագիծ՝** 2 կետ, գույն՝ 100 % կապտականաչ, կլոր անկյուններ՝ 3.5 մմ:
- **Արժեք՝** «Կալիբրի» տառատեսակ, թավ 24 կետ, 100 % սեւ եւ «Կալիբրի» տառատեսակ, սովորական 16 կետ, 100 % սեւ:

13. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը

- 14. Մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը**
 15. Մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը եւ մոդելի նույնականացուցիչը պետք է տեղավորվեն 92 x 15 մմ տարածության մեջ:
 - 16. Կանոնակարգի համարը՝ «Կալիբրի» տառատեսակ, թավ 12 կետ, 100 % սեւ:**
-

*ՀԱՎԵԼՎԱԾ II***Արտադրանքի տեղեկաթերթիկը**

1. Կենցաղային լվացքի մեքենայի արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները պետք է ներկայացվեն հետևյալ հաջորդականությամբ եւ պետք է ընդգրկվեն արտադրանքի մասին բոլորը կամ արտադրանքի հետ տրամադրվող այլ գրականության մեջ.
 - ա) մատակարարի անվանումը կամ ապրանքային նշանը.
 - բ) մատակարարի տրամադրած մոդելի նույնականացուցիչը, որն այն ծածկագիրն է՝ սովորաբար տառաթվային, որով կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելը տարբերակվում է նույն ապրանքային նշանով կամ մատակարարի անվանմամբ այլ մոդելներից.
 - գ) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ լրիվ բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ծրագրի համար նոմինալ տարողունակությունը՝ կիլոգրամով՝ կախված նրանից, թե որն է ավելի ցածր.
 - դ) էներգաարդյունավետության դասը՝ VI հավելվածի 1-րդ կետի համաձայն.
 - ե) այս տեղեկությունները կարող են ներառվել, եթե թիվ 66/2010 կանոնակարգի (ԵՀ) համաձայն կենցաղային լվացքի մեքենային շնորհվել է «ԵՄ էկոպիտակ».
 - զ) հաշվարկված տարեկան էներգասպառումը (A_{Ec})՝ կՎտ.ժամ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը, պետք է նկարագրվի հետևյալ կերպ. «էներգասպառումը՝ «X» կՎտ.ժամ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքի ժամանակ 60 °C եւ 40 °C-ում բամբակյա

գործվածքի համար նախատեսված ծրագրի լվացման 220 ստանդարտ ցիկլերի եւ ցածր էներգասպառման ռեժիմի դեպքում: Փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում.

- է) լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի եւ մասնակի բեռնվածքի պարագայում 40 °C -ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումը՝ ($E_{t,60}$, $E_{t,60\frac{1}{2}}$, $E_{t,40\frac{1}{2}}$).
- ը) հաշվարկված էներգասպառումն անջատված եւ միացված ռեժիմներում.
- թ) ջրի հաշվարկված տարեկան սպառումը (AW_C)՝ լ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը, պետք է նկարագրվի հետեւյալ կերպ. «ջրի սպառումը՝ «X» լ/տարի՝ լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում 60 °C-ում եւ 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ծրագրի լվացման 220 ստանդարտ ցիկլերի դեպքում: Փաստացի էներգասպառումը կախված է նրանից, թե ինչպես է սարքն օգտագործվում.
- ժ) քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը՝ սահմանված VI հավելվածի 2-րդ կետին համապատասխան՝ արտահայտված որպես «քամելու եղանակով չորացման արդյունավետության «X» դաս՝ «G»-ից (ամենաքիչ արդյունավետ) մինչեւ «A» (ամենաարդյունավետ) սանդղակի համաձայն. այն կարող է ներկայացվել այլ կերպ՝ պայմանով, որ հստակ կլինի այն, որ սանդղակը «G»-ից (ամենաքիչ անարդյունավետ) մինչեւ «A»-ն (ամենաարդյունավետ) է.
- ժա) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ մասնակի բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի քամելու առավելագույն արագությունը՝ կախված

նրանից, թե դրանցից որն է ավելի ցածր, եւ լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում կամ մասնակի բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում մնացորդային խոնավության պարունակությունը՝ կախված նրանից, թե դրանցից որն է ավելի մեծ.

- ժբ) նշում այն մասին, որ «60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիրը» եւ «40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագիրը» լվացման ստանդարտ ծրագրեր են, որոնց վերաբերում են պիտակի վրա եւ տեղեկաթերթիկում նշված տեղեկությունները, եւ որ այդ ծրագրերը նպատակահարմար է օգտագործել միջին կեղտոտվածության բամբակյա լվացքի մաքրման համար, ինչպես նաեւ նշում այն մասին, որ էներգիայի եւ ջրի համակցված սպառման տեսանկյունից դրանք համարվում են ամենաարդյունավետ ծրագրերը.
- ժգ) լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում «60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի» եւ մասնակի բեռնվածքի պարագայում «40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի» ժամանակը՝ արտահայտված թուղաներով եւ կլորացված մինչեւ թուղաների ամենամոտ արժեքը.
- ժդ) միացված ռեժիմի տեւողությունը (T_i), եթե կենցաղային լվացքի մեքենան համալրված է էլեկտրաէներգիայի կառավարման համակարգով.
- ժե) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի լվացման եւ քամելու փուլերում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

- ժգ) եթե կենցաղային լվացքի մեքենան նախատեսված է ներկառուցման համար, ապա նշվում է կատարվում այդ մասին:
2. Մեկ տեղեկաթերթիկում կարող է ներառվել նույն մատակարարի կողմից մատակարարվող կենցաղային լվացքի մեքենաների մի շարք մոդելների վերաբերյալ տեղեկություններ:
 3. Տեղեկաթերթիկում պարունակվող տեղեկությունները կարող են ներկայացվել պիտակի պատճենի ձևով՝ գունավոր կամ սեւ ու սպիտակ: Այս դեպքում 1-ին կետում նշված տեղեկությունները, որոնք դեռ ներկայացված չեն պիտակի վրա, նույնպես տրամադրվում են:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ 23***Տեխնիկական փաստաթղթերը**

1. 3(գ) հոդվածում նշված տեխնիկական փաստաթղթերը ներառում են՝
 - ա) մատակարարի անվանումը եւ հասցեն.
 - բ) լվացքի մեքենայի մոդելի ընդհանուր նկարագրությունը, որը բավարար է այն միանշանակ եւ դյուրին կերպով նույնականացնելու համար:
 - գ) անհրաժեշտության դեպքում՝ հղումներ կիրառվող ներդաշնակեցված ստանդարտներին.
 - դ) անհրաժեշտության դեպքում՝ օգտագործված մյուս տեխնիկական ստանդարտները եւ մասնագրերը.
 - ե) մատակարարի համար պարտավորություններ սահմանելու նպատակով լիազորված անձի նույնականացման տվյալները եւ նրա ստորագրությունը.
 - զ) նշում այն մասին, թե արդյոք լվացման ցիկլի ընթացքում կենցաղային լվացքի մեքենայի տվյալ մոդելն արտազատում է արծաթի իոններ, թե ոչ. «Լվացման ցիկլի ընթացքում այս արտադրանքն արտազատում է/չի արտազատում արծաթի իոններ».
 - է) չափումների համար նախատեսված տեխնիկական պարամետրեր հետեւյալ կարգով՝
 - i) էներգասպառումը.
 - ii) ծրագրի ժամանակը.
 - iii) ջրի սպառումը.
 - iv) էներգասպառումը «անջատված ռեժիմում».

- v) էներգասպառումը «միացված ռեժիմում».
 - vi) «միացված» ռեժիմի տեսողությունը.
 - vii) մնացորդային խոնավության պարունակությունը.
 - viii) օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները.
 - ix) քամելու առավելագույն արագությունը.
- ը) VII հավելվածին համապատասխան կատարված հաշվարկների արդյունքները:
2. Եթե կենցաղային լվացքի մեքենայի կոնկրետ մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ կենցաղային լվացքի մեքենայի այլ համարժեք մոդելներից արտամիջարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը պետք է ներառեն այդ հաշվարկների կամ արտամիջարկումների կամ այդ երկուսի մանրամասները, ինչպես նաև կատարված հաշվարկների ճշգրտությունը ստուգելու համար մատակարարների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Տեղեկատվությունը պետք է ներառի նաև կենցաղային լվացքի մեքենայի համարժեք բոլոր մյուս այն մոդելների ցանկը, որոնց առնչվող տեղեկությունները ձեռք են բերվել նույն եղանակով:
-

*ՀԱՎԵԼՎԱԾ IV***Տրամադրվելիք տեղեկություններն այն դեպքերում, երբ չի կարելի ակնկալել, որ վերջնական սպառողները կարող են տեսնել ցուցադրված արտադրանքը**

1. 4(բ) հոդվածում նշված տեղեկությունները տրամադրվում են հետևյալ կարգով՝
 - ա) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ լրիվ բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում նոմինալ տարողունակությունը՝ կիրգրամով՝ կախված նրանից, թե որն է ավելի ցածր.
 - բ) էներգաարդյունավետության դասը, ինչպես սահմանված է VI հավելվածի 1-ին կետով.
 - գ) հաշվարկված տարեկան էներգասպառումը՝ կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 1(գ) կետի համաձայն.
 - դ) հաշվարկված տարեկան ջրի սպառումը՝ կՎտժ/տարի-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը եւ հաշվարկված VII հավելվածի 2(ա) կետի համաձայն.
 - ե) քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը՝ VI հավելվածի 2-րդ կետի համաձայն.
 - զ) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ մասնակի բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի քամելու առավելագույն արագությունը՝ կախված նրանից, թե դրանցից որն է ավելի ցածր, եւ լրիվ բեռնվածքի

պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում կամ մասնակի բեռնվածքի պարագայում 40 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի դեպքում մնացորդային խոնավության պարունակությունը՝ կախված նրանից, թե դրանցից որն է ավելի մեծ.

է) լրիվ բեռնվածքի պարագայում 60 °C-ում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի լվացման եւ քամելու փուլերում օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները՝ 1 պՎտ-ի հաշվով արտահայտված դԲԱ-ով՝ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը.

ը) եթե կենցաղային լվացքի մեքենան արտադրված է ներկառուցման համար, ապա նշում է կատարվում այդ մասին:

2. Եթե տրամադրվում են նաեւ արտադրանքի տեղեկաթերթիկում պարունակվող այլ տեղեկություններ, ապա այն տրամադրվում է II հավելվածում նշված ձեւով եւ կարգով:

3. Սույն հավելվածում նշված բոլոր տեղեկությունները տպագրվում կամ ներկայացվում են ընթերցելի տառատեսակով եւ տառաչափով:

*ՀԱՎԵԼՎԱԾ V***Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման
ընթացակարգը**

3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջների հետ համապատասխանությունը ստուգելու նպատակներով անդամ պետությունների լիազորված մարմինները փորձարկում են մեկ միավոր կենցաղային լվացքի մեքենա: Եթե չափված պարամետրերը չեն համապատասխանում մատակարարի կողմից նշված արժեքներին՝ 1-ին աղյուսակով սահմանված միջակայքում, ապա չափումներ են իրականացվում եւս երեք կենցաղային լվացքի մեքենաների համար: Այդ երեք կենցաղային լվացքի մեքենաների համար չափված արժեքների միջին թվաբանականը պետք է համապատասխանի մատակարարի կողմից նշված արժեքներին՝ 1-ին աղյուսակում բերված միջակայքում, բացի էներգասպառումից, որտեղ չափված արժեքը չպետք է E_r -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի քան 6 %-ով:

Այլապես, տվյալ մոդելը եւ մյուս բոլոր համարժեք կենցաղային լվացքի մեքենաները համարվում են 3-րդ եւ 4-րդ հոդվածներով սահմանված պահանջներին չհամապատասխանող:

Անդամ պետությունների լիազորված մարմինները կիրառում են հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի չափման այնպիսի ընթացակարգեր, որոնցում հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման մեթոդները, այդ թվում՝ այն փաստաթղթերում ներկայացված մեթոդները, որոնց համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում*:

Աղյուսակ 1

| | |
|--|---|
| Չափված պարամետրը | Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները |
| Տարեկան էներգասպառումը | Չափված արժեքը չպետք է AE_c -ի նոմինալ արժեքից * մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Էներգասպառումը | Չափված արժեքը չպետք է E_c -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Ծրագրի ժամանակը | Չափված արժեքը չպետք է T_c -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Ջրի սպառումը | Չափված արժեքը չպետք է W_c -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Մնացորդային խոնավության պարունակությունը | Չափված արժեքը չպետք է D -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Քամելու արագությունը | Չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից պակաս լինի ավելի, քան 10 %-ով: |
| Էներգասպառումն անջատված եւ միացված ռեժիմներում | 1,00 Վտ-ից բարձր P_o եւ P_L էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: 1.00 Վտ-ից պակաս կամ հավասար՝ P_o եւ P_L էներգասպառման չափված արժեքը չպետք է նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 0,10 Վտ-ով: |
| Միացված ռեժիմի տեսողությունը | Չափված արժեքը չպետք է T_c -ի նոմինալ արժեքից մեծ լինի ավելի, քան 10 %-ով: |
| Օդով փոխանցվող ակուստիկ աղմուկի արտադրման մակարդակները | Չափված արժեքը պետք է համապատասխանի նոմինալ արժեքին: |
| (*) «նոմինալ արժեք» նշանակում է մատակարարի կողմից նշված արժեք: | |

ՀԱՎԵԼՎԱԾ 29

**Էներգաարդյունավետության եւ քամելու եղանակով չորացման
արդյունավետության դասերը**

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Կենցաղային լվացքի մեքենայի էներգաարդյունավետության դասը որոշվում է դրա էներգաարդյունավետության ինդեքսին (EEI) համապատասխան, ինչպես սահմանված է 1-ին աղյուսակով:

Կենցաղային լվացքի մեքենայի էներգաարդյունավետության (EEI) ինդեքսը որոշվում է VII հավելվածի 1-ին կետի համաձայն:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության դասերը

| Էներգաարդյունավետության դասը | Էներգաարդյունավետության ինդեքսը |
|------------------------------|---------------------------------|
| A+++ (ամենաարդյունավետ) | $EEI < 46$ |
| A++ | $46 \leq EEI < 52$ |
| A+ | $52 \leq EEI < 59$ |
| A | $59 \leq EEI < 68$ |
| B | $68 \leq EEI < 77$ |
| C | $77 \leq EEI < 87$ |
| D (ամենաքիչ արդյունավետ) | $EEI \geq 87$ |

2. ՔԱՄԵԼՈՒ ԵՂԱՆԱԿՈՎ ՉՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ

Կենցաղային լվացքի մեքենայի քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը որոշվում է մնացորդային խոնավության պարունակությանը (D) համապատասխան, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում:

Կենցաղային լվացքի մեքենայի մնացորդային խոնավության պարունակությունը (D) սահմանվում է VII հավելվածի 3-րդ կետի համաձայն:

Աղյուսակ 2

Քամելու եղանակով չորացման արդյունավետության դասերը

| Քամելու եղանակով չորացման արդյունավետության դասը | Մնացորդային խոնավության պարունակությունը (%) |
|--|---|
| A (առավել արդյունավետ) | $D < 45$ |
| B | $45 \leq D < 54$ |
| C | $54 \leq D < 63$ |
| D | $63 \leq D < 72$ |
| E | $72 \leq D < 81$ |
| F | $81 \leq D < 90$ |
| G (ամենաքիչ արդյունավետ) | $D \geq 90$ |

ՀԱՎԵԼՎԱԾ 31

Էներգաարդյունավետության ինդեքսի, ջրի տարեկան սպառման եւ մնացորդային խոնավության պարունակության հաշվարկման մեթոդը

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային լվացքի մեքենայի մոդելի էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկելու համար 60 °C-ում լրիվ եւ մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի եւ 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի համար կենցաղային լվացքի մեքենայի հաշվարկված տարեկան էներգասպառումը համեմատվում է դրա ստանդարտ տարեկան էներգասպառման հետ:

ա) Էներգաարդյունավետության ինդեքսը (EEI) հաշվարկվում է հետևյալ կերպ եւ կլորացվում է մինչեւ մեկ տասնորդական նիշ.

$$EEI \frac{AE_c}{SAE_c} \times 100$$

որտեղ՝

AE_c -ն կենցաղային լվացքի մեքենայի տարեկան էներգասպառումն է.

SAE_c -ն կենցաղային լվացքի մեքենայի ստանդարտ տարեկան էներգասպառումն է:

բ) Ստանդարտ տարեկան էներգասպառումը (SAE_c) հաշվարկվում է կվտժ/տարի-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

$$SAE_c = 47,0 \times c + 51,7$$

որտեղ՝

c -ն $60\text{ }^{\circ}\text{C}$ -ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի կամ $40\text{ }^{\circ}\text{C}$ -ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի նոմինալ տարողունակությունն է՝ կախված նրանից, թե որն է ավելի ցածր:

գ) Հաշվարկված տարեկան էներգասպառումը (AE_C) հաշվարկվում է կվտժ/տարի-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

$$i) \quad AE_C = E_t \times 220 + \frac{\left[P_o \times \frac{525600 - (T_t \times 200)}{2} + P_l \times \frac{525600 - (T_t \times 200)}{2} \right]}{60 \times 1000}$$

որտեղ՝

E_t -ն հաշվարկված էներգասպառումն է.

P_o -ն «անջատված ռեժիմի» հաշվարկված հզորությունն է.

P_l -ն «միացված ռեժիմի» հաշվարկված հզորությունն է.

T_t -ն ծրագրի հաշվարկված ժամանակն է.

220-ը տարեկան վացման ստանդարտ ցիկլերի ընդհանուր թիվն է:

ii) Եթե կենցաղային վացքի մեքենան սարքավորված է էլեկտրաէներգիայի կառավարման համակարգով, որով ծրագրի ավարտից հետո կենցաղային վացքի մեքենան ավտոմատ կերպով անցնում է «անջատված ռեժիմի», ապա հաշվարկված տարեկան էներգասպառումը (AE_C) հաշվարկվում է՝ հաշվի առնելով «միացված ռեժիմի» արդյունավետ տեւողությունը՝ ըստ հետևյալ բանաձեւի.

$$AE_C = E_t \times 220 + \frac{\{(P_l \times T_t \times 220) + P_o \times [525600 - (T_t \times 200) - (T_t \times 200)]\}}{60 \times 1000}$$

որտեղ՝

T_t -ն «միացված ռեժիմի» տեւողությունն է:

դ) Հաշվարկված էներգասպառումը (E_t) հաշվարկվում է կՎտժ-ով՝ հետեւալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երեք տասնորդական նիշ.

$$E_t = [3 \times E_{t,60} + 2 \times E_{t,60,1/2} + 2 \times E_{t,40,1/2}]/7$$

որտեղ՝

$E_{t,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է.

$E_{t,60,1/2}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է.

$E_{t,40,1/2}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի էներգասպառումն է:

ե) «Անջատված ռեժիմի» հաշվարկված հզորությունը (P_o) հաշվարկվում է Վտ-ով՝ հետեւյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

$$P_o = (3 \times P_{o,60} + 2 \times P_{o,60,1/2} + 2 \times P_{o,40,1/2})/7$$

որտեղ՝

$P_{o,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է.

$P_{o,60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է.

$P_{o,40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «անջատված ռեժիմի» հզորությունն է:

գ) «Միացված ռեժիմի» հաշվարկված հզորությունը (P_l) հաշվարկվում է Վտ-ով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ երկու տասնորդական նիշ.

$$P_l = (3 \times P_{l,60} + 2 \times P_{l,60\frac{1}{2}} + 2 \times P_{l,40\frac{1}{2}}) / 7$$

որտեղ՝

$P_{l,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$P_{l,60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$P_{l,40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է:

է) Ծրագրի հաշվարկված ժամանակը (T_t) հաշվարկվում է ըստ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ ընդամենը ամենամոտ արժեքը.

$$T_t = (3 \times T_{t,60} + 2 \times T_{t,60\frac{1}{2}} + 2 \times T_{t,40\frac{1}{2}}) / 7$$

որտեղ՝

$T_{t,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{t,60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է.

$T_{t,40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ժամանակն է:

ը) Ծրագրի հաշվարկած ժամանակը (T_l) հաշվարկվում է ըստ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ ըստ հետևյալ ամենամոտ արժեքը.

$$T_l = (3 \times T_{l,60} + 2 \times T_{l,60\frac{1}{2}} + 2 \times T_{l,40\frac{1}{2}}) / 7$$

որտեղ՝

$T_{l,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$T_{l,60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

$T_{l,40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի «միացված ռեժիմի» հզորությունն է.

2. ԶՐԻ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

ա) Կենցաղային լվացքի մեքենայի ջրի հաշվարկված տարեկան սպառումը (AW_c) հաշվարկվում է լիտրերով՝ հետևյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ ամբողջ թիվը.

$$AW_c = W_t \times 220$$

որտեղ՝

W_t -ն ջրի հաշվարկված սպառումն է.

220-ը տարեկան լվացման ստանդարտ ցիկլերի ընդհանուր թիվն է:

բ) Ջրի հաշվարկված սպառումը (W_t) հաշվարկվում է լիտրերով՝ հետեւյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ ամբողջ թիվը.

$$W_t = (3 \times W_{t,60} + 2 \times W_{t,60\frac{1}{2}} + 2 \times W_{t,40\frac{1}{2}})/7$$

որտեղ՝

$W_{t,60}$ -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ջրի սպառումն է.

$W_{t,60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ջրի սպառումն է.

$W_{t,40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի ջրի սպառումն է:

3. ՄՆԱՑՈՐԴԱՅԻՆ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ

Կենցաղային լվացքի մեքենայի մնացորդային խոնավության հաշվարկված պարունակությունը հաշվարկվում է տոկոսով՝ հետեւյալ կերպ, եւ կլորացվում է մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը.

$$D = (3 \times D_{60} + 2 \times D_{60\frac{1}{2}} + 2 \times D_{40\frac{1}{2}})/7$$

որտեղ՝

D_{60} -ը 60 °C-ում լրիվ բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի մնացորդային խոնավության պարունակությունն է՝ տոկոսով արտահայտված եւ կլորացված մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը.

$D_{60\frac{1}{2}}$ -ը 60 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի մնացորդային խոնավության պարունակությունն է՝ տոկոսով արտահայտված եւ կլորացված մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը.

$D_{40\frac{1}{2}}$ -ը 40 °C-ում մասնակի բեռնվածքի պարագայում բամբակյա գործվածքի համար նախատեսված ստանդարտ ծրագրի մնացորդային խոնավության պարունակությունն է՝ տոկոսով արտահայտված եւ կլորացված մինչեւ տոկոսի ամենամոտ ամբողջ արժեքը:
